ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտ, 2021 թվականի № 25-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի իգ) կետով, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված «Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 21-րդ կետով, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2021 թվականի մարտի 30-ի N Ռ/21 01-33 գրությունը և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները և օրենսդրական պահանջները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2020 թվականի տարեկան եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:
2. Հաստատել Ընկերության 2020 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:
3. Հաստատել Ընկերության 2020 թվականի տարեկան դրամական հոսքերի նախահաշվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

31 մարտի, 2021 թվականի

ք. Երևան